ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» օգոստոսի 2026 թվականի N 829-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 1679-Ն որոշման դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-067-0119-0147 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 11.54 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է գյուղատնտեսական, իսկ գործառնական նշանակությունն՝ արոտավայր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Ուրբան Հաուսինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026MWAU64 ծածկագրի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. օգոստոսի 13
Ք. Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» օգոստոսի 2026 թվականի N 828-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐԱ ԱՐԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-007-0026-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և 24-րդ կետի 4-րդ և 10-րդ ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 31.07.2026 թվականի թիվ 01/03.1/06712-2026 գրությունը և Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 12-ի թիվ 65-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել սեփականության իրավունքով Արա Արամյանին պատկանող 07-007-0026-0002 ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքի գործառնական նշանակության փոփոխությունը, որպես բնակելի կառուցապատման հողատարածք:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 13
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» օգոստոսի 2026 թվականի N 827-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Հ. Սաֆարյանի 15.07.2026 թվականի թիվ 3400/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Լաուրա և Հայկ Սաֆարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 18-րդ փողոց թիվ 3 հասցեի գույքը բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 18-րդ փողոց թիվ 3 (հողամասի մակերեսը՝ 1064.2 քմ) և Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 18-րդ փողոց թիվ 3/1 /հողամասի մակերեսը՝ 538 քմ/ միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Արամ Աջաբխանյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 13
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«12» օգոստոսի 2026 թվականի N 826-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՆՎԵՐ ՎԱՉԱԳԱՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով և 219.1-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սուրեն Մինասյանի 2026 թվականի օգոստոսի 07-ի թիվ ՔՏՄ/20.6/21889-26 գրությունը և կից արձանագրությունը, և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետի տեղակալ Հարություն Մարտիկյանի 2026 թվականի օգոստոսի 07-ի թիվ Ե/3/2134-26 գրությունը, **որոշում եմ.**

1. **Նվեր Վաչագանի Ալեքսանյանի** նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 17-ին, ժամը 16:00-ին՝ ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1 հասցեում, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» օգոստոս 2026 թվականի N 825-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Հովհաննիսյան	Սվետլանա	30000	դրամ
Կարապետյան	Օֆելյա	30000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 12
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» օգոստոսի 2026 թվականի N 824-Ա

ԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 08-Ի ԹԻՎ 740-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 08-ի «**Արմեն Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գյուղ Արզական 2-րդ փողոց թիվ 13 հասցեում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին**» թիվ 740-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Գ. Մանուկյանի 06.08.2026թ. թիվ ԳՄ/17026-2026 գրության և 02072026-07-0161 սեփականության վկայականի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2026 թվականի N 823-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 8/11 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Կրեմլինա Երիցյանի համաձայնությունը՝

որոշում եմ.

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 14112025-07-0185 վկայական) ք. Չարենցավան Մ. Խորենացու փողոց 5-րդ փակուղի թիվ 8/11 հասցեում գտնվող 22.09 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 22.09 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Կրեմլինա Երիցյանին:

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. Կրեմլինա Երիցյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 37000 (երեսունյոթ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 64000 (վաթսունչորս հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է Կրեմլինա Երիցյանի կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ Ռուդիկ Սահակյանին ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից Կրեմլինա Երիցյանի հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» օգոստոսի 2026 թվականի N 822-Ա

ԳԵՎՈՐԳ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Ա. ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն, 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշումների դրույթներով և հաշվի առնելով Գ. Սաֆարյանի 19.06.2026թ. թիվ 2764/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Գևորգ Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան Ա. Խանջյան փողոց 1-ին փակուղի թիվ 6 հասցեում գտնվող 0.00198 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 19.8 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ պահեստը, համաձայն հատակագծի և «Տիգրան Փոթիկյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023ENJU3D ծածկագրի:
2. 0.00198 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 19.8 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի գործառնական նշանակությունը համարել փոխված՝ որպես հասարակական նշանակության պահեստ:
3. Օրինական ճանաչված շինությունների համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 80.000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» օգոստոսի 2026 թվականի N 821-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 27-Ն հրամանի 13-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 03-ի «Չարենցավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 859 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 722-Լ որոշումը, ***որոշում եմ.***

1. 2026 թվականի օգոստոսի 11-ին ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով՝ ՀՀ Կոտայքի մարզպետի, համայնքապետարանի, Չարենցավան համայնքի ավագանու և Չարենցավանի ուսումնական հաստատությունների կողմից առաջադրված թեկնածուների անվանական տվյալների հիման վրա և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն ***հավելվածի:***

1.1 Մրցույթի անցկացման պատասխանատու նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արևիկ Այվազյանին:
1.2 Մրցույթի անցկացման համակարգչային աշխատանքների պատասխանատու նշանակել համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Մամիկոնյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. օգոստոսի 10
Ք.Չարենցավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի
2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ 821-Ա որոշման

11/08/2026
11:00

10/08/2026 11:54:14 A

Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ ՉՀ-3.1-1)

Հանձնաժողովի կազմը

Սուրեն Մուրադյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Աշխատակազմի քարտուղար
Այլ տվյալներ՝ mursur78@mail.ru

Գայանե Աֆյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ
Այլ տվյալներ՝ gayaneafyan@mail.ru

Սուսաննա Մկրտչյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Գլխավոր մասնագետ
Այլ տվյալներ՝ m.susanna72@mail.ru

Հարություն Ալեքսանյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Վարչության պետ
Այլ տվյալներ՝ Sayat_alegsan@mail.ru

Գևորգ Գրիգորյան
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ
Այլ տվյալներ՝ GrigoryanGev1992@gmail.com

Տիգրան Խանսանամյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ դպրոցի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» օգոստոսի 2026 թվականի N 820-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 12-ին անցկացվելիք թիվ 8 արտահերթ նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

- ***/նախագիծ 68-Ա/*** Սեփականություն իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
- ***/նախագիծ 69-Ա/*** Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
- ***/նախագիծ 70-Ա/*** «ԱՍՏՈՐԻԱ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող Արզականի տարածքում գտնվող բնաղբյուրից /կապտաժ/ ջրօգտագործման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. օգոստոսի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» օգոստոսի 2026 թվականի N 819-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՍԵՐԺԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱԼԱՓԱՐՍ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ Ալափարս Երջանկության փողոց թիվ 25 հասցեում գտնվող 0.12000 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1945 թվականին ինքնակամ կառուցված 440.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 2.1 քմ մակերեսով պարիսպը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը: Հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքում: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Չարենցավան համայնք, գյուղ Ալափարս Երջանկության փողոց թիվ 25 հասցեում գտնվող ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի սեփականատեր Սերժիկ Նազարյանին պատկանող 0.12000 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1945 թվականին ինքնակամ կառուցված 440.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 2.1 քմ մակերեսով պարիսպը՝ ***որոշում եմ.***

1. 07-008-0075-0007 ծածկագրով հողամասը և շինությունը հասցեավորել որպես Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Երջանկության փողոց թիվ 25:

2. Չարենցավան համայնք, գյուղ Ալափարս Երջանկության փողոց թիվ 25 հասցեում գտնվող 0.12000 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1945 թվականին ինքնակամ կառուցված 440.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 2.1 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026XPTE3D ծածկագրի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» օգոստոսի 2026 թվականի N 818-Ա
««ՉԱՐԵՆՑԱՎԱՆՇԻՆ» ՏՐԵՍՏԻՆ ԿԻՑ «ԱՎԱԶԱՆ» ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ 1990 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ» ԵՎ «ԱՎԱԶԱՆ» ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 54035 ԱՆԴԱՄԱՏՈՄՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 39-րդ շենքի 20 բնակարանի բնակիչ Արկադի Անդրեասյանի 2026 թվականի օգոստոսի 06-ի թիվ 3783/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Չարենցավանշին» տրեստին կից «Ավազան» այգեգործական ընկերության անդամների 1990 թվականի ցուցակի 3-րդ կետում և «Ավազան» այգեգործական ընկերության համար 54035 անդամատոմսում /տրված՝ 14.11.1991թ./ «Անդրեասյան Սվետլանա» բառերը փոխարինել համապատասխան «Անդրեսյան Սվետլանա Խաչատուրի» բառերով (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան համայնք, գյուղ Արզական, Ավազան թաղամաս, 2-րդ փողոց, 5 այգետնակ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. օգոստոսի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» օգոստոսի 2026 թվականի N 817-Ա

«ԱՆԻՄԱ ՌԵԶՈՐԹ» ԲԻՍԻՍԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով և 219.1-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետի առաջին տեղակալ Մուրադ Նուրիջանյանի 2026 թվականի հուլիսի 31-ի թիվ Ե/3/2038-26 գրությունը և կից արձանագրությունը, և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սուրեն Մինասյանի 2026 թվականի օգոստոսի 08-ի թիվ ՔՏՄ/20.6/21728-26 գրությունը, **որոշում եմ.**

1. **«Անիմա Ռեզորթ» ԲԻՍԻՍԻ ՍՊԸ-ի** նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 17-ին, ժամը 15:30-ին՝ ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1 հասցեում, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **ՄԵՎԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026թ. օգոստոսի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» օգոստոսի 2026 թվականի N 816-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՍԵՐԺԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծերի և կադաստրային կոմիտեում հաշվառված չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրերի, հաշվի առնելով, որ նշված հողամասերը չեն դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Սերժիկ Նազարյանի կողմից 07-008-0275-0002 /չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026K8QEPG, 0.13969 հա/, 07-008-0255-0012 /չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026UDPYRK, 0.69994 հա/, 0.83963 հա մակերեսով հողատարածքներից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0.03963 հա մակերեսով հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026թ.օգոստոսի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» օգոստոսի 2026 թվականի N 815-Ա

ՎԱՉԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 17 դեկտեմբերի 2025 թվականի <<<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ 397-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս Այգեգործական փողոց 4-րդ փակուղի թիվ 22 հասցեի 0.075 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա, որը չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին, 1989 թվականին ինքնակամ կառուցված 157.51 քմ մակերեսով շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Վաչիկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 0.075 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1989 թվականին ինքնակամ կառուցվել է 157.51 քմ մակերեսով շինություններ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս Այգեգործական փողոց 4-րդ փակուղի թիվ 22 հասցեի թիվ 15102024-07-0015 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով 0.075 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1989 թվականին ինքնակամ կառուցված 157.51 քմ մակերեսով շինությունները համարել օրինական՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի 05.08.2026թ. թիվ ԳՄ/16660-2026 գրության:
2. Սույն որոշմամբ ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 27.02.2026թ. թիվ 267 որոշումը:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026թ.օգոստոսի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» օգոստոսի 2026 թվականի N 814-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Ասատրյանի 20.07.2026 թվականի թիվ 3477/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Արայիկ, Անուշ Ասատրյաններին և Գոհար Վարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 9-րդ փողոց թիվ 8 հասցեի գույքը*** բաժանել 4 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 9-րդ փողոց թիվ 8*** (հողամասի մակերեսը՝ 0.43332 հա, առանձնացվող հատված-1), ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 9-րդ փողոց թիվ 8/1*** /հողամասի մակերեսը՝ 0.07292 հա, առանձնացվող հատված-2), ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 9-րդ փողոց թիվ 8/2*** (հողամասի մակերեսը՝ 0.07391 հա, առանձնացվող հատված-3) և ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 9-րդ փողոց թիվ 8/3*** (հողամասի մակերեսը՝ 0.01113 հա, առանձնացվող հատված-4), միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026թ. օգոստոսի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» օգոստոսի 2026 թվականի N 813-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/4 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Արմեն Օսիպյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 03082026-7-0230 վկայական) ***ք. Չարենցավան Հ. Թումանյան փողոց թիվ 10/4*** հասցեում գտնվող 27.0 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և 27.0 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Արմեն Օսիպյանին:
2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 17721 (տասնյոթ հազար յոթ հարյուր քսանմեկ) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:
3. Արմեն Օսիպյանը պարտավոր է վճարել.
   1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 479000 (չորս հարյուր յոթանասունինը հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.
   2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 121000 (մեկ հարյուր քսանմեկ հազար) դրամ՝ հողամասի գինը:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է Արմեն Օսիպյանի կողմից:
6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ Ռուդիկ Սահակյանին ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից Արմեն Օսիպյանի հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ***Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ***

2026թ.օգոստոսի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» օգոստոսի 2026 թվականի N 812-Ա

ՄԻՍԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 10/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 17 դեկտեմբերի 2025 թվականի <<<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ 397-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ Արզական Չարենցավանի խճուղի 1-ին փակուղի թիվ 10/1 հասցեի 0.00742 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա, որը չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին, 1980 թվականին ինքնակամ կառուցված 64.3 քմ մակերեսով շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Միսակ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00742 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում 1980 թվականին ինքնակամ կառուցվել է 64.3 քմ մակերեսով շինություն՝

որոշում եմ.

1. Չարենցավան համայնք, գյուղ Արզական Չարենցավանի խճուղի 1-ին փակուղի թիվ 10/1 հասցեի թիվ 21122024-07-0001 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով 0.00742 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա 1980 թվականին ինքնակամ կառուցված 64.3 քմ մակերեսով շինությունը համարել օրինական՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի 05.05.2026թ. թիվ ԳՄ/8514-2026 գրության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026թ.օգոստոսի 07
Ք.Չարենցավան